Է. ՏԱՐԻ — ՁՈՐԵՔՇԱԲԹԻ 2 ՅՈՒՆԻՍ 1904 — ԹԻՎ 623

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ	համար
Տարեկան	12 Ֆր.
Վեցամսեայ	6 »
Արտասահմանի համար տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »
Ամերիկայի համար	
Տարեկան	3 տլր.
Վեցամսեայ	1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ, իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ։ Հրատարակութեան ամսագրի համար 20 0/0 զեղչ կը տրուի։

Վաճառքի համար ձրի 10 սանթիմ

R. P. Kalémcarian, Mechitharistengasse W. 4. (Autriche) Vienne

Նամակ եւ դրամ ղրկել հրատարակչատեղին հասցեին

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձեռքի)(20 ՍԱՆԹԻՄ)(

Պուլկարիոյ համար ձեռքի)(15 ՍԱՆԹԻՄ)(

Գրութիւնք եւ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԻՆԸ ՊԼՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ»

ՍԱՍՈՒՆ

Բողոք մարմնացած, վրէժ ահռնկեց՝
Սասունցին ահա՛ մօսինին գրկեց,
Ու կայծակորէն իջաւ մարտադաշտ՝
Մղելու համար կռիւ մը անհաշտ։

Ի զո՛ւր թշնամի թիւրքն արիւնարբու
Քանդել կը տենչայ բոյնն արծիւներու։
Ցանձին Հրայրի, Անդրանկի ըմբոստ՝
Մամիկոնեաններն արթընցան ընդոստ։

Ի՞նչ փոյթ թէ հրացան և հրետ զոռան,
Ի՞նչ փոյթ թէ լրսուի գուգազի կական։
Սասուն, ծառացած, կը դոռոչ անվախ,
Զերդ Նրժոյգ կայտառ և փրփրերախ։

Փա՛ռք քեզի, Սասուն, Զէյթունի ընկեր,
Փա՛ռք քու ժայռերուդ սեպ ու ապալեր,
Ուր ջոլիրները ուրախին խրժդուժ
Մ'իյնան դիտապատ, թափեն ապաժոյժ։

Փա՛ռք քեզի, Սասուն, վրեժ խրատացում
Մեր ատելութեան ներոյժ, անպատում։
Դուն ժանրանկարն ես մեծ պայքարին՝
Ուր դրժնէ թիւրքեր պիտի սրրորին։

Ո՛վ դուն, ռահվիրա՛յ Հայու փրկութեան,
Ջարդէ՛ անխընայ, ապրէ՛ յաւիտեան։
Պայքարիդ՝ կեանք է վեհ, համապարփակ
Ուր պիտի ծագի նորոգ արեգակ,

Եւ ուր վերջապէս մարդիկ համօրէն
Սէր, երջանկութիւն պիտի վայելեն՝
Իսպառ մոռնալով յուշերն օրերուն
Որ տառապանքով էին թաթաւուն։

Վար—Տա

1904 Մայիս 25
Ռուսչուք

ՍԱՍՈՆՈՅ ՃԱՐԺՈՒՄՆԵՐԸ

—)o(—

Ցայլ լրագրին Պոլսէն կը հեռագրեն հետեւեալը։

Թանի տուած լուրը, որ ըստ հիւպատոսներու Սասնոյ վերջին դէպքերու առթիւ տուած տեղեկութեանց 5,000ի կը հասնի, բոլորովին սխալ է։ Զոհերու թիւը դեռ չէ հաստատուած, բայց կը կարծուի որ քանի մը հարիւր հոգի ըլլայ։ Հիւպատոսները դեռ իրենց քննութիւնը չեն կատարած։

— Եւրոպական թերթերուն կը հաղորդեն որ ըստ Թուրք իշխանութեանց տեղեկութեանց ապրիլ 17էն, եւրոպական մինչեւ մայիս 15 Հայաստանի մէջ 8 հայ հրոսախմբեր երեւցած են, եօթ հեղ կռիւ ունեցած թուրք զօրքերու հետ, և իբր թէ այդ կռիւներուն մէջ երեք հրոսախմբեր ջընջուած են։

— Պոլսէն մայիս 29ին Վիէննա կը հեռագրեն թէ՝ Անգլիական, Ռուսական և Ֆրանսական դեսպանները Թուրքիոյ խստիւ խորհուրդ տուած են հայոց դէմ ձեռք առնուած բռնութիւնները կասեցնել։ Կառավարութիւնը խօսք տուած է պէտք եղածը կատարել։

— Ֆրանսական Երեսփոխանական Ժողովին մէջ Պրէսանսէ իր հարցապնդումը ըրած միջոց պահանջած է նաւային ցոյց ընել Թուրքիոյ դէմ։ Դէլկասէ պատասխանած է թէ Ֆրանսական կառավարութիւնը իր պարտականութիւնը կատարած է հայերու հանդէպ և պիտի կատարէ։ Յայտարարած է նաեւ, որ իրենց հիւպատոսին տուած տեղեկութիւնները կը ցուցնեն թէ հայերուն հասած վնասները չափազանցուած են. այս անգամ գործերը 94-95 թուականի կերպարանքը չունին։ Խոստացած է նաեւ որ Ֆրանսական հիւպատոսը Մուշ պիտի մնայ մինչեւ որ հայերը իրենք զիրենք ապահով զգան։

Անցեալ անգամ շեշտեցինք թէ սասունցիների 5000 զոհ տալը ենթադրական է, ու այսօր մեծ գոհունակութեամբ տալիս ենք մեր ընթերցողներին վերի լուրը, որը հերքելով «Փան» լրագրի տուած լուրը, յայտնում է նաեւ որ հիւպատոսների քննութիւնները դեռ չեն վերջացած, ու Սասունի զոհերի թիւը մի քանի հարիւրի է հասնում։

Մեր ստացած պաշտօնական տեղեկութիւններից էլ երեւում է որ Սասունցիք 5000 զոհ չը պէտք է տուած լինեն, որովհետեւ թէ փառաւոր կերպով դիմադրել են, թշնամուց էլ մեծ քանակութեամբ զոհեր խլելով, և թէ ժամանակ առաջ գիւղերից հեռացրել են երկսեռ երիտասարդներին։

Դէլկասէի յայտարարութիւնն էլ, թէ հայերին վերաբերված կորուստները չափազանցված են և Սասունում այս տարի գործերը ուրիշ կերպարանք ունեն, քան 94 95ին էր, ապացուցանում է թէ Սասունցիները այնքան ոգեւորութեամբ հռչակված մեծ կորուստները չեն տուել։

Այս մի ամսվան ընթացքում յաջորդաբար ստացված տեղեկութիւններից կարելի է որոշ կերպով եզրակացնել, թէ Սասունցիները ստիպված քաջաբար դիմադրել են քրտերի և թուրքերի յարձակումներին, իրենց տուած մարդկային կորուստների փոխարէն նոյն չափով զոհ են խլել և Հ. Յ. Դաշնակցութիւնն էլ աշխատած է իր ձեռքից եկածի չափով օժանդակ հանդիսանալ հայ բնիկի ազատութեան մարտիկներին։

Հիմա խնդիր է թէ թուրք կառավարութիւնը պէտք է յաջողի՞ Սասունցիներին վերջապէս դաշտ իջեցնել, թէ եւրոպական պետութիւնները այս անգամ էլ պէտք է տրամադրութիւն և կամք ունենան նրանց իրենց լեռներում վերահաստատել տալ, ինչպէս արին 95 թուականին։

Այս մութ կէտը կը պարզվի եւրոպական քննիչների քննութիւնը կատարվելուց յետոյ, երբ կը որոշվի հետաքրքրվող մեծ պետութիւնների բռնելիք դիրքը։ Ուստի մենք խուսափում ենք մարգարէութիւններ անելուց, թէ լաւ, թէ վատ։ որովհետեւ մեր դիմացը ունենք մի գազան թուրք կառավարութիւն և մի Եւրոպա, որի լրբութեան և ազնուութեան զատող գիծերը այնքան էլ չեն որոշվում։

Խնդիրը ինչպէս Սասունցիների, նոյն իսկ ամբողջ Տաճկահայութեան կարգադրվելու համար մեծ նշանակութիւն ունի և մեր յեղափոխական կազմակերպութեան բռնելիք ուղղութիւնն ու ընթացքը ներկայ պարագաներում։

* * *

Երբ Մակեդոնացիները դժգոհ մնացին գիւղի պահապանները բուլգարներ կարգելու ծրագրից ու սպառնացին աւելի մեծ շարժումներ ստեղծել, ռուս գոռոզ միապետութեան գոռոզ արտաքին գործերի նախարարը ցուրտ ձմրան վազեց Սոֆիա մակեդոնացիներին սպառնալու որ տեղերից չը շարժվեն։ Մակեդոնական կազմակերպութիւնը կարեւորութիւն չը տուեց այդ գոռոզ սպառնալիքներին և գարնանը, մինչեւ ամրան վերջերը աւելի խոշոր շարժումներ ստեղծեց Մակեդոնիոյ մէջ։ Ու Լամստորֆների պետերը պարտաւորվեցին իրենց խրախճանքի ժամերը կրճատել, և պատրաստել Մուրցշտէկի ծրագիրը— եւրոպական կոնտրոլի պէս մի բան և եւրոպական սպաներ ժանտարմաներին ղեկավարելու՝ ծրագիրը իրագործելու համար։ Թէեւ այս էլ մի մեծ բան չէ, բայց ի հարկէ աւելի մեծ քան պահապան-

ների բուլգար լինելը։

Մենք հաւատում ենք, թէ Հայ. Ցեղ. Դաշնակցութիւնը, պայմանները լաւ ուսումնասիրելուց յետոյ կամ արդէն ուսումնասիրած լինելով համապատասխան քայլեր կառնէ հայկական խնդիրը մի մեծ քայլ եւս առաջ մղելու համար դէպի լուծում։

ՎԱՐԴՕ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

Այս վերնագրով ֆրանսական նախկին արտաքին գործոց նախարար Պ. Պերթելօ-ն հետեւեալ բաց նամակն է հրատարակել Orot Թերթում, որից և արտատպել է Թան-ը։

Փարիզ, 1904 Յունիս 5

Պարոն *** հային!

Ձեր ժողովուրդի նահատակութիւնը խորապէս յուզում է բոլոր այն մարդկանց, որոնք նուիրուած են մարդկային բարօրութեան և ժամանակակից քաղաքակրթութեան պատուին։ Պատմութեան մէջ չը կայ մի աւելի ողբերգական դրութիւն, քան հայերի ճակատագիրը։ Ոչ ոնց ըստացուածքը, պատիւն ու կեանքը անվերջ կերպով մատնուած են աւազակային սոսկալի բռնաբարումների, նոյնիսկ վեհապետից ներ հալածուած, որի առջին պարտականութիւնի պիտի լինէր նրանց պաշտպանել։

Անմեղ ծերերի, կանանց և երախաների դէմ գործուած գազանութիւնները, և անդադար կրկնուած քուրդերի կողմից՝ Համիտիէ և Թուրք կառավարիչների գունդերի օգնութեամբ, տասը տարիներից ի վեր արդէն ընդհանուր զայրոյթ են առաջ բերել։ Բերլինի դաշնադրութեամբ խոստացուած և եւրոպական պետութիւնների կողմից երաշխաւորուած բարենորոգումները շարունակաբար և անամօթաբար չեն գործադրուած։

Ճշմարտութեան համար, թոյլ տուէք ինձ յիշելու, որ ֆրանսական կառավարութիւնը, 1895 Նոյեմբերին, իմ առաջարկութեամբ իր նաւատորմիղն ուղարկեց Արշիպեղագոսի ջրերը, և այս առաքումը այն հետեւանքն ունեցաւ, որ արգիլեց հայկական ջարդերի տարածումը Սիրիայի բնակչութեան մէջ։

Կ. Պոլսի մեր այն ժամանակի դեսպան Պ. Գամպոն-ին տուած հրահանգներիս նա հետեւեց ամենաբուռն եռանդով և ուժով, և Բ. Դրան յիշեցնել տուեց ոնրա վերայ դրուած պարտականութիւնը գործադրելու բարենորոգումների ամբողջութիւնը, որոնց հաւանութիւն էր տուել։ (1896ի փետր. 11ի հեռագիրը)։ Բայց Ֆրանսան բաւական ուժեղ չէ միայնակ գործելու համար, միջազգային շահերի և փառասիրութեան հակառակութիւնը մեր ջանքերը չլատելով՝ թոյլ տուին ոճիրների վերսկսումը Հայաստանի մէջ։ Այդ բանի համար պէտք էր բոլոր մեծ պետութիւնների օգնութիւնը։

Ցիրաւի, այս օգնութիւնը կարող է և պէտք է ստացուի։ Տասնեւիններորդ դարումդա իրականացաւ շատ դէպքերում, և որը բերեց յաջորդական ազատագրութիւնը Յունաստանի, Ռումանիայի, Սերպիայի, Բուլկարիայի և Կրէտէի, որոնք դարձան շատ թէ քիչ անկախ իշխանութիւններ։ Ահա թէ ինչպէս այս ժողովուրդները ազատագրուեցան բռնակալութիւնից, որ միջնադարեան ամենաարհուրելի բարբարոսութեան ծնունդ լինելով՝ վերապահում է դեռ մինչեւ այսօր ամենաանլուր խորամանկութիւնն ու անգթութիւնը։

Մի մարդ եմ ճանաչում, որին մի պաշտօնական անձ առաջարկել էր, ուիթ-ուարի կայ, մտերմօրէն այնպէս, ինչպէս միւս պետութիւններին, Օսմանեան կայսրութեան բաժանումը։

Չը գիտեմ թէ այդպէս պիտի ասեր մենք կատակարանական ազգ էինք։ Այսօր մենք ազգասէրներ ենք։ Էդուց մենք պէտք է այնքատաւորներ դառնանք», այս էր Արծրունի՝ վերջին խօսքը։

Ինչպէս կը նշմարուի, անդրանիկ առաջնորդողը արդէն նկատել կուտայ ապագայ զօրեղ կոիւ մը մեր «էնտէլիկէնդ» կարծուած դասակարգին դէմ, որ գրպանը տիրոյթ մը դրած՝ արհամարհանք կը նետէ դէմը երդողին։ Կոիւ անպարտաճանաչ ինտելիկէնցիայի դէմ։ Այդ կոիւը երկար, սիս աէմպիք եղաւ։ Նոյն իսկ հալածանքի կիրպարանք առաւ։ Արծրունիի ամենամեծ փառքերէն մէկը չինելով՝ անոր անկեղծութեան, անշահախնդրութեան անողոք ապացոյցը տալով, այնպիսի շրջանի մը մէջ՝ երբ հայ օրագրական մամուլը գոյութիւն չունէր, երբ հայ կեանքը չէր հանդուրժէր անաչառ, անկաշկանդ, անվախօրէն խօսող մարդուն, մանաւանդ երբ ձայնը կը բարձրանար էնտիլիկենցիա կեդրոնին՝ Թիֆլիսի մէջ, «Հիւսիսափայլ»ի պատմութիւնը գեղեցկօրէն կապացուցանէ ասիկա։ Եթէ այդ անդրանիկ հալածող, հարուածող օրկանը կարողացաւ քիչ թէ շատ կեանք ունենալ, պատճառը այն էր որ, բուն հայ իրականութեան հեռու՝ Մոսկուայի մէջ կապրէր։ Ու կիրքերը իրենց բոլոր թոյնով ու թափով չէին կրնար խմբագրին երակներուն մէջ հոսիլ, հեռաւորութիւնը անձնականութիւնները քիչ շատ կը չեզոքացնէր, թէեւ։ վերջապէս կրքերը ցոյց տուին իրենց բապանիչ ազդեցութիւնն ու գահավիժեցին «Հիւսիսափայլը»։

Բայց Արծրունի Նազարեանց չէր։ Եթէ հայութեան անչարժ ճակատը հեռաւոր Մոսկուայէն միայն կը փոթորկէր Նազարեանց, Արծրունի այդ ճահիճին մէջ իսկ կեցած ճակատ ճակատի զարնուեցաւ բոլոր խաւարփտած, մգլոտած ուժերուն դէմ։ Պատերազմը, ի հարկէ, ահռելի եղաւ։ Յաղթողին։ Նազարեանց մեղմ ընաւորութեամբ, խաղաղ ու երազող քարոզիչ մըն էր։ Արծրունի կրակն, ըմբոստ հոգի մը, ամենէն ազնիւ կիրքերով առլցուն, որ միս մինակ, խաւարի ահեղ լեգէոնին դէմ կը նետուէր զարնել, ջախջախել, ջարդ ու փշուր ընելու համար։ Ամբողջ քսան տարի Արծրունի պայքարեցաւ այսպէս, փառքերու ամենէն գեղեցիկը, ամենէն յաւիտենականը խլելով իր երախտագէտ ազգէն։

Եւ Արծրունի միշտ յարգանքով կը մօտենար Նազարեանցի անբիծ յիշատակին, զոր կընդունէր իբր իր հայրը, իր կարապետը։ Իսկապէս տարբերութիւնը երկուքի միջեւ, ծերունդի տարբերութիւն էր։ Նազարեանց հին ազատական մըն էր, Արծրունի նոր ազատական, մին ազգասիրութեան անունով կը պաշտպանէր լուսաւորութիւնը, միւսը՝ աշխատանքի, յառաջդիմութեան անունով։ առաջինը թուէյթատ մըն էր, տեսապաշտ, երազող, երկրորդը ռէալիստ մը՝ դրապաշտ, գործնական։ Մենք հարկ կը համարենք կանգ առնել այս երկու բառերուն վրայ, որովհետեւ ամենէն շարչրկուած ու խաչուած բառերն են մեր գրականութեան մէջ, որոնք ծնունդ տուած են խիստ ապուշ ու անիմաստ համոզումներու եւ գաղափարներու։

Մ.

(Շարունակելի)

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ
ԵՒ
«ՄՇԱԿ»Ի ԴՈՐՇՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Բ.

Մշակի առաջին տարիներեն մինչեւ 1876

Վերջապէս 1872 յուն. 1ին հրատարակուեցաւ «Մշակի» առաջին թիւը, փոքր դիրքով թերթիկ մը՝ իւրաքանչիւր էջերը չորսական սիւնակներէ բաղկացած, հիւթեղ, ցնցիչ, կազդուրիչ, պարփակելով իր փոքր սիւնակներուն մէջ ներկայ հրապարակագրական դալար ճիւղերէն ամենէն կուռ ու խտացած յօդուածները։

Ահա անդրանիկ առաջնորդողը՝ գրուած Գրիգոր Արծրունիի պողպատէ գրչով. «Երէկ եւ էգուց.»

Ի՞նչ էինք մենք երէկ. հնամոլ, սնափառ ազգասէրներ, որ մեր առասպելական աւանդութիւնները ու կրօնական անցեալին զանազան դրուագները մտաւէս որոճալով՝ կը փառաւորուէինք ու կը պարծենայինք։ Գոնէ մեր լեզուն չենք սորվեր ու սորվեցներ մեր յաջորդներուն. ժամանակակից հայուն ու հայրենիքին վրայ չէինք մտածեր երբէք որովհետեւ մենէ ամէն մէկը ինքզինքը անհամեմատօրէն բարձր կզգար իր ազգին առջեւ, ու չէր զլխաներ այդ արհամարհելի ամբողջութեան մասին խօսելու։ Մեր բոլոր ազգասիրութիւնը կը կայանար աւանդական դէմքերու տօնին եկեղեցի երթալու մէջ։ Մեր խմբագիրներն ալ նոյնը կընէին. Վարդանէն, Վահանէն դուրս ոեւէ քաջի զոյութեան չէին հաւատար, առանց անոնց հայ ազգ ու հայրենիք չիկար. Վարդա՛ն. Վահա՛ն. կեցցէ՛ Հայաստան. այս էր իրենց անփոփոխելի նշանաբանը։

Բայց Երէկը անցաւ. Այսօր ամէնքս ալ քիչ թէ շատ փոխեւել կուզենք. նոր, թարմ ուսում կուտանք մեր սերունդներուն, հնութեան փոշիներ ամէն կողմէ թօրթվելու կաշխատինք հետզհետէ, կենդանի լեզու, կենդանի գրականութիւն. վերածնուած կեանք կը տենչանք. ճշմարիտ ազգասիրութեան կայծը սկսած է երեւան գալ ընդհանուր ազգին մէջ։ Այ ըմբռնեցինք վերջապէս ժամանակի պահանջը. հին սերունդը մեր անինայ հարուածներուն ենթարկուած է այսօր, ասոնց միակողմանի, անպատեհ ու ծիծաղելի դաստիարակութիւնը մեր ամէնօրեայ ծաղրին ու հեգնութեան առարկան է։ Համալսարանները մեզի տուին բանակ մը ամենաարմ ու ճոխ պաշարներով առլցուած գլուխներու։

Բայց ահա Վաղը կը մօտենայ։ Ի՞նչ պիտի ընենք. Արծրունի կըսէ որ՝ այդ համալսարանականները պէտք է աշխատին լուսաւորութիւն տարածել ազգին մէջ. պէտք է ժողովրդին հասկցնեն յառաջդիմութեան, լուսաւորութեան նշանակութիւնը, անոր հիմնական սկզբունքը որ աշխատանքն է։ Համալսարանականները սակայն, կանգիտանան իրենց այդ գլխաւոր պարտականութիւնն ու անտարբեր կը մնան օրուան ստիպողականութեան պահանջին առջեւ։ Վաղը. երբ մեր Լուսաւորիչի դերը չի կատարենք, հասարակաց դատաստանին առջեւ պիտի ամբաստանուինք։

«Երէկ մենք կատակարանական ազգ էինք։ Այսօր մենք ազգասէրներ ենք. էդուց մենք պէտք է այնքատաւորներ դառնանք», այս էր Արծրունի՝ վերջին խօսքը։

Ինչպէս կը նշմարուի, անդրանիկ առաջնորդողը արդէն նկատել կուտայ ապագայ զօրեղ կոիւ մը մեր «էնտէլիկէնդ» կարծուած դասակարգին դէմ, որ գրպանը տիրոյթ մը դրած՝ արհամարհանք կը նետէ դէմը երդողին։ Կոիւ անպարտաճանաչ ինտելիկէնցիայի դէմ։ Այդ կոիւը երկար, սիս աէմպիք եղաւ։ Նոյն իսկ հալածանքի կիրպարանք առաւ։ Արծրունիի ամենամեծ փառքերէն մէկը չինելով՝ անոր անկեղծութեան, անշահախնդրութեան անողոք ապացոյցը տալով, այնպիսի շրջանի մը մէջ՝ երբ հայ օրագրական մամուլը գոյութիւն չունէր, երբ հայ կեանքը չէր հանդուրժէր անաչառ, անկաշկանդ, անվախօրէն խօսող մարդուն, մանաւանդ երբ ձայնը կը բարձրանար էնտիլիկենցիա կեդրոնին՝ Թիֆլիսի մէջ, «Հիւսիսափայլ»ի պատմութիւնը գեղեցկօրէն կապացուցանէ ասիկա։ Եթէ այդ անդրանիկ հալածող, հարուածող օրկանը կարողացաւ քիչ թէ շատ կեանք ունենալ, պատճառը այն էր որ, բուն հայ իրականութեան հեռու՝ Մոսկուայի մէջ կապրէր։ Ու կիրքերը իրենց բոլոր թոյնով ու թափով չէին կրնար խմբագրին երակներուն մէջ հոսիլ, հեռաւորութիւնը անձնականութիւնները քիչ շատ կը չեզոքացնէր, թէեւ։ վերջապէս կրքերը ցոյց տուին իրենց բապանիչ ազդեցութիւնն ու գահավիժեցին «Հիւսիսափայլը»։

Բայց Արծրունի Նազարեանց չէր։ Եթէ հայութեան անչարժ ճակատը հեռաւոր Մոսկուայէն միայն կը փոթորկէր Նազարեանց, Արծրունի այդ ճահիճին մէջ իսկ կեցած ճակատ ճակատի զարնուեցաւ բոլոր խաւարփտած, մգլոտած ուժերուն դէմ։ Պատերազմը, ի հարկէ, ահռելի եղաւ։ Յաղթողին։ Նազարեանց մեղմ ընաւորութեամբ, խաղաղ ու երազող քարոզիչ մըն էր։ Արծրունի կրակն, ըմբոստ հոգի մը, ամենէն ազնիւ կիրքերով առլցուն, որ միս մինակ, խաւարի ահեղ լեգէոնին դէմ կը նետուէր զարնել, ջախջախել, ջարդ ու փշուր ընելու համար։ Ամբողջ քսան տարի Արծրունի պայքարեցաւ այսպէս, փառքերու ամենէն գեղեցիկը, ամենէն յաւիտենականը խլելով իր երախտագէտ ազգէն։

Եւ Արծրունի միշտ յարգանքով կը մօտենար Նազարեանցի անբիծ յիշատակին, զոր կընդունէր իբր իր հայրը, իր կարապետը։ Իսկապէս տարբերութիւնը երկուքի միջեւ, ծերունդի տարբերութիւն էր։ Նազարեանց հին ազատական մըն էր, Արծրունի նոր ազատական, մին ազգասիրութեան անունով կը պաշտպանէր լուսաւորութիւնը, միւսը՝ աշխատանքի, յառաջդիմութեան անունով։ առաջինը թուէյթատ մըն էր, տեսապաշտ, երազող, երկրորդը ռէալիստ մը՝ դրապաշտ, գործնական։ Մենք հարկ կը համարենք կանգ առնել այս երկու բառերուն վրայ, որովհետեւ ամենէն շարչրկուած ու խաչուած բառերն են մեր գրականութեան մէջ, որոնք ծնունդ տուած են խիստ ապուշ ու անիմաստ համոզումներու եւ գաղափարներու։

Մ.

(Շարունակելի)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Սուչաւա 6 Յուլիս 1904

Սուչաւայի ազգային հոգաբարձութեան կողմանէ երկու նամակ խրկուցաւ, մին Վառնայի ազգային հոգաբարձութեան և միւսը Կ. Պոլսոյ պատրիարքին որպէս զի առաջինը թոյլատրէ Տ. Սարգիս հայր Ղարիպեանին մի քիչ ժամանակ եւս մնայ Սուչաւայի երկրորդը հրամայէ արժանապատիւ Տէր Սարգիս Ղարիպեանին որ առայժմ չ'ճանապարէ Վառնայ երթալու, մինչեւ որ Սուչաւայի ազգային հոգաբարձութիւնը մի ուրիշ քահանայ գտնայ։

Ուրախութեամբ կը յայտնենք թէ մեր ազգայինները և թէ ժամանակները փոխուած են։ Աչխարհ արդարատ գիտէ թէ Սուչաւայի հայ գաղթականութիւնը որ Անիի 3,000 հայ գաղթականութենէ 50-60 տուն կազմող մի մնացորդն է, առանց ձուլվելու օտարին, պահած են իրենց եկեղեցիի ապագայում։ Սպասելով, շարունակեցէ՛ք ձեր արդար գործը՝ քաղաքակրթուած ժողովուրդների մէջ հասարակական կարծիքը բարձրացնելու։ մեր ցեղերը երբեմն մեծահոգութեան զգացմունքից դրդուած աւելի հեռուն են գնում, քան թէ շահերից։

Հաճեցէք, պարոն, ընդունիլ իմ մեծ յարգանքի և համակրանքի հաւաստիքը։

Մ. Պերբլօ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ
ԵՒ
«ՄՇԱԿ»Ի ԴՈՐՇՈՒՆԷՈՒԹԻՒՆԷՈՒԹԻՒՆԻ

Բ.

Մշակի առաջին տարիներեն մինչեւ 1876

Վերջապէս 1872 յուն. 1ին հրատարակուեցաւ «Մշակի» առաջին թիւը, փոքր դիրքով թերթիկ մը՝ իւրաքանչիւր էջերը չորսական սիւնակներէ բաղկացած, հիւթեղ, ցնցիչ, կազդուրիչ, պարփակելով իր փոքր սիւնակներուն մէջ ներկայ հրապարակագրական դալար ճիւղերէն ամենէն կուռ ու խտացած յօդուածները։

Ահա անդրանիկ առաջնորդողը՝ գրուած Գրիգոր Արծրունիի պողպատէ գրչով. «Երէկ եւ էգուց.»

Ի՞նչ էինք մենք երէկ. հնամոլ, սնափառ ազգասէրներ, որ մեր առասպելական աւանդութիւնները ու կրօնական անցեալին զանազան դրուագները մտաւէս որոճալով՝ կը փառաւորուէինք ու կը պարծենայինք։ Գոնէ մեր լեզուն չենք սորվեր ու սորվեցներ մեր յաջորդներուն. ժամանակակից հայուն ու հայրենիքին վրայ չէինք մտածեր երբէք որովհետեւ մենէ ամէն մէկը ինքզինքը անհամեմատօրէն բարձր կզգար իր ազգին առջեւ, ու չէր զլխաներ այդ արհամարհելի ամբողջութեան մասին խօսելու։ Մեր բոլոր ազգասիրութիւնը կը կայանար աւանդական դէմքերու տօնին եկեղեցի երթալու մէջ։ Մեր խմբագիրներն ալ նոյնը կընէին. Վարդանէն, Վահանէն դուրս ոեւէ քաջի զոյութեան չէին հաւատար, առանց անոնց հայ ազգ ու հայրենիք չիկար. Վարդա՛ն. Վահա՛ն. կեցցէ՛ Հայաստան. այս էր իրենց անփոփոխելի նշանաբանը։

Բայց Երէկը անցաւ. Այսօր ամէնքս ալ քիչ թէ շատ փոխեւել կուզենք. նոր, թարմ ուսում կուտանք մեր սերունդներուն, հնութեան փոշիներ ամէն կողմէ թօրթվելու կաշխատինք հետզհետէ, կենդանի լեզու, կենդանի գրականութիւն. վերածնուած կեանք կը տենչանք. ճշմարիտ ազգասիրութեան կայծը սկսած է երեւան գալ ընդհանուր ազգին մէջ։ Այ ըմբռնեցինք վերջապէս ժամանակի պահանջը. հին սերունդը մեր անինայ հարուածներուն ենթարկուած է այսօր, ասոնց միակողմանի, անպատեհ ու ծիծաղելի դաստիարակութիւնը մեր ամէնօրեայ ծաղրին ու հեգնութեան առարկան է։ Համալսարանները մեզի տուին բանակ մը ամենաարմ ու ճոխ պաշարներով առլցուած գլուխներու։

Բայց ահա Վաղը կը մօտենայ։ Ի՞նչ պիտի ընենք. Արծրունի կըսէ որ՝ այդ համալսարանականները պէտք է աշխատին լուսաւորութիւն տարածել ազգին մէջ. պէտք է ժողովրդին հասկցնեն յառաջդիմութեան, լուսաւորութեան նշանակութիւնը, անոր հիմնական սկզբունքը որ աշխատանքն է։ Համալսարանականները սակայն, կանգիտանան իրենց այդ գլխաւոր պարտականութիւնն ու անտարբեր կը մնան օրուան ստիպողականութեան պահանջին առջեւ։ Վաղը. երբ մեր Լուսաւորիչի դերը չի կատարենք, հասարակաց դատաստանին առջեւ պիտի ամբաստանուինք։

«Երէկ մենք կատակարանական ազգ էինք։ Այսօր մենք ազգասէրներ ենք. էդուց մենք պէտք է այնքատաւորներ դառնանք», այս էր Արծրունի՝ վերջին խօսքը։

Ինչպէս կը նշմարուի, անդրանիկ առաջնորդողը արդէն նկատել կուտայ ապագայ զօրեղ կոիւ մը մեր «էնտէլիկէնդ» կարծուած դասակարգին դէմ, որ գրպանը տիրոյթ մը դրած՝ արհամարհանք կը նետէ դէմը երդողին։ Կոիւ անպարտաճանաչ ինտելիկէնցիայի դէմ։ Այդ կոիւը երկար, սիս աէմպիք եղաւ։ Նոյն իսկ հալածանքի կիրպարանք առաւ։ Արծրունիի ամենամեծ փառքերէն մէկը չինելով՝ անոր անկեղծութեան, անշահախնդրութեան անողոք ապացոյցը տալով, այնպիսի շրջանի մը մէջ՝ երբ հայ օրագրական մամուլը գոյութիւն չունէր, երբ հայ կեանքը չէր հանդուրժէր անաչառ, անկաշկանդ, անվախօրէն խօսող մարդուն, մանաւանդ երբ ձայնը կը բարձրանար էնտիլիկենցիա կեդրոնին՝ Թիֆլիսի մէջ, «Հիւսիսափայլ»ի պատմութիւնը գեղեցկօրէն կապացուցանէ ասիկա։ Եթէ այդ անդրանիկ հալածող, հարուածող օրկանը կարողացաւ քիչ թէ շատ կեանք ունենալ, պատճառը այն էր որ, բուն հայ իրականութեան հեռու՝ Մոսկուայի մէջ կապրէր։ Ու կիրքերը իրենց բոլոր թոյնով ու թափով չէին կրնար խմբագրին երակներուն մէջ հոսիլ, հեռաւորութիւնը անձնականութիւնները քիչ շատ կը չեզոքացնէր, թէեւ։ վերջապէս կրքերը ցոյց տուին իրենց բապանիչ ազդեցութիւնն ու գահավիժեցին «Հիւսիսափայլը»։

Բայց Արծրունի Նազարեանց չէր։ Եթէ հայութեան անչարժ ճակատը հեռաւոր Մոսկուայէն միայն կը փոթորկէր Նազարեանց, Արծրունի այդ ճահիճին մէջ իսկ կեցած ճակատ ճակատի զարնուեցաւ բոլոր խաւարփտած, մգլոտած ուժերուն դէմ։ Պատերազմը, ի հարկէ, ահռելի եղաւ։ Յաղթողին։ Նազարեանց մեղմ ընաւորութեամբ, խաղաղ ու երազող քարոզիչ մըն էր։ Արծրունի կրակն, ըմբոստ հոգի մը, ամենէն ազնիւ կիրքերով առլցուն, որ միս մինակ, խաւարի ահեղ լեգէոնին դէմ կը նետուէր զարնել, ջախջախել, ջարդ ու փշուր ընելու համար։ Ամբողջ քսան տարի Արծրունի պայքարեցաւ այսպէս, փառքերու ամենէն գեղեցիկը, ամենէն յաւիտենականը խլելով իր երախտագէտ ազգէն։

Եւ Արծրունի միշտ յարգանքով կը մօտենար Նազարեանցի անբիծ յիշատակին, զոր կընդունէր իբր իր հայրը, իր կարապետը։ Իսկապէս տարբերութիւնը երկուքի միջեւ, ծերունդի տարբերութիւն էր։ Նազարեանց հին ազատական մըն էր, Արծրունի նոր ազատական, մին ազգասիրութեան անունով կը պաշտպանէր լուսաւորութիւնը, միւսը՝ աշխատանքի, յառաջդիմութեան անունով։ առաջինը թուէյթատ մըն էր, տեսապաշտ, երազող, երկրորդը ռէալիստ մը՝ դրապաշտ, գործնական։ Մենք հարկ կը համարենք կանգ առնել այս երկու բառերուն վրայ, որովհետեւ ամենէն շարչրկուած ու խաչուած բառերն են մեր գրականութեան մէջ, որոնք ծնունդ տուած են խիստ ապուշ ու անիմաստ համոզումներու եւ գաղափարներու։

Մ.

(Շարունակելի)

ազգային ամեն յատկութիւն (բայց ոչ ազգասիրութիւն)։

Սուչաւացին գրեթէ միշտ զբաղուած է իր կրօնքով, եկեղեցիներով քահանաներով, վանքերով և կալուածներով բայց ոչ ազգային խնդիրով։

Բայց հիմայ ժամանակը փոխուած է և մարդոց զգացումն ալ անոր հետը։ Սուչաւացի հայերը որ Աւստրիոյ պէս ազատ երկրի մէջ կապրին ամեն առանձնաշնորհութիւն ունին պարտաւոր են ամեն բան ընելու։ Քանի մը ամիս առաջ քաղաքիս ազգային հոգաբարձութեան անդամներէն երկու կարեւոր անձեր, որոնց անունները ինձ պարծանք մըն է յիշելու պատուարժան աղաջա Հաճի Խաչերես, և աղաջա Ցովհաննէս, Լուգուց բաւական աշխատեցան Աւստրիոյ Նախարարապետին խնդրագիր մը տալ, յանուն Պուգովինայի հայութեան, եկեղեցապատկան կալուածներու մասին, բայց քանի մը անձերու անտարբերութեան պատճառաւ չը յաջողեցան։

Բայց հիմայ միեւնոյն պատուարժան անձերն Տէր Սարգիս հօր Ղարիպեանի ազգու քարոզներէն քաջալերվելով, փափաք կը յայտնեն հանգանակութեան մը ձեռնարկել, ի նպաստ մեր Սասնոյ հրամանատար Անդրանիկին։ Եթէ այս հանգանակութիւնը յաջող ելք մը ունենայ որ նոր պիտի սկսի 8-10 օրէն, մեծ պարծանք մըն է Սուչաւայի հայութեան։ Կը յուսամ որ մեր պարոնութեան, ֆօնութեան տիտղոս ունեցող աղաջաները որոնք իրենց հաճոյքին համար առատ առատ ֆիօրիններ կը ծախսեն բարեհաճին հետեւիլ մեր աղաջա Խաչերեսին և աղաջա Լուգուցին և իրենց նուէրները առատ առատ տալու հաճին մեր Սասնոյ հերոսներուն որոնք իրենց կեանքը Հայաստանի սիրուն համար կը զոհեն։ Թող բարեհաճին մեր հայ հարուստները իրենց անտարբերութենէն սթափիլ և պատրաստուին իրենց լուման զոհել հայրենիքի սիրուն համար։

29/16 մայիս Հոգեգալուստի օրը Արժանապատիւ Տէր Սարգիս Ղարիպեան հայրը Սուչաւայի Ս. Խաչ եկեղեցին պատարագ մատուց. Տէր Ղարիպեան հայրը իւր քարոզին մէջ երկարօրէն և մանրամասնաբար նկարագրեց Բասէնի և Խանասորի մեր հերոսներուն ճակատամարտը. իւր ազդու քարոզը ներկայ ժողովրդին վրայ մեծ տպաւորութիւն թողուց. պատարագին վերջը հոգեհանգիստ կատարեց Բասէնի և Խանասորի կռւին մէջ նահատակւող քաջերուն համար միեւնոյն ժամանակ կրկին և կրկին քաջալերեց եկեղեցւոյ բոլոր ներկայ ժողովուրդը որ չ'զլանան իրենց պարտականութիւնը առ Հայաստան առ յեղափոխականները որոնք զէնք ի ձեռին կը մարտնչին Սասնոյ սարերուն վրայ։

Շաւարշ Տ. Մ. ծիկեան

Սիրելի ընկերներ

Կովկասէն ընկեր մը հետեւեալ արտաշարժ տեղեկութիւնները կը հաղորդէ ինձ, որը աւելորդ չեմ համարեր գրել Ձեզ, Շարժումի մէջ հրատարակելու համար, և որը բառ առ բառ կը դնեմ հոս։

27 Ապրիլ Պաթում

45,000 հայ (արմեաշկա) և ի՞նչ խղալի պատառ, իսկ դուք Ձեր կողմից աւելացրէք բորենիների յատուկ գազանական կիրքն ու վրէժխնդրութիւնը և կ'ատանաք ճիշդ և ճիշդ Գալիցինի նման բորենու պատկեր....

Աւելի քան 50,000 հայերով լեցուն Թիֆլիսը սարսափում է կրկին տեսնելով այն հրէշային արարքները, որոնք գործ են ածւում իրանց եղբայրակիցների վրայ. Տաճկահայ գաղթականութիւնն է դա....

Այդ խեղալի պատառի հոգսն է կրկին հրապարակ նետուել, այս անգամ դուցէ աւելի շատ գերազանցուած քան մինչեւ այժմ տեսնուածները... Դեռ մի ամիս առաջ էր որ իւրաքանչիւր մի ոստիկանատան մէջ վխտում էին տաճկահայերը, զունատ ու պաղատագին, աղաչող «յանուն Ցարի» որ խնայեն, բայց այս անգամ չ'կայ ներում և դուք կայարանումն էք, ահա իւրաքանչիւր մի գնացքում ինչպէս ոչխարային հօտ լցնում են հայերին. չարժուեց գնացքը, բայց ո՞ւր տարաւ տաճկահայերին, դէպի ո՞ր կողմ, ո՞ր երկիր, այդ գաղտնիք է, գաղտնիք գէթ առ այժմ, և յայտնի միմիայն Գալիցինեան գիւանագէտներին։

Աւելի շատ գերազանցուած ասացի. այո՛ գերազանցուած որովհետեւ անցեալներում գէթ ծայրահեղ դէպքերում, կարող կը լինէին ընդունել ռուսահպատակութիւն, իսկ այժմ այդ էլ չ'ընդունւում, և ինչո՞ւ ընդունել, չէ՞ որ առանց այդ էլ այժմ իրանց հրէշային ծրագրին աւելի լաւ են հասնում, ցաք ու ցրիւ անելով բոլորին, նոյնիսկ նրանց՝ որոնք կանոնաւոր անցագիր ունին, և որոնք օրէնքով ազատ իրաւունք պիտի ունենային ապրելու, ուր՝ որ եւ է. առ այժմ միմիայն Թիֆլիսն է. անշուշտ յաջող դէպքը պիտի քաջալերէ անհոգ գազանին աւելի հեռուն ամբողջ Կովկասը տարածելու լի ու լի յոյսով իւր հիւանդոտ ու խելառ ուղեղի ունեցած բոլոր արտադրութիւնները։

Կարող էք հասկանալ գրութեանս տոնից որ սաստիկ շտապում էի, աւելի մանրամասնութիւններ կը հաղորդեմ Ձեզ ժամանակին. առ այժմ այսչափ։

Թռուցիկ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ցարգելի ընկերներ,

Մենք Պուրկազի Ենթակօմիտէէն ընդունած ենք 1508լէվ.85 սանթիմ. և հանգանակութիւնն ալ այդչափ եղած է։ Սակայն անցեալ օր Շարժումի մէջ, Ենթակօմիտէի հրատարակած նամակին մէջ, 5 թիւը որոշ չէր ելած և շատեր փոխանակ 1508ի, 1000 հասկցեր են։

Պալք. Կեդր. Կօմիտէ

մայիս 30

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Թէհրան Պ. Մ. Վարդ...

Պ. Ց. Պարտ է երկու տարվան, այս տարիով երեք, միւսները երկու տարվան, և քանի որ իրենք հեռացել են, այս տարի, դադրեցրինք։ Դրամը ռուսական փող ուղարկեցէք, կնքեցէք և արժէքը վրան նշանակեցէք, եթէ ոչ կը կորի։

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Հոգաբարձութիւնս իւր մասնաւոր շնորհակալութիւնը կը յայտնէ «Վէսէլլօ» խմբի յարգոյ անդամներուն, և մանաւանդ Տիար Ա. Պէնլեանի, որոնք ո՛չ մի ջանք չը խնայեցին ամէն կերպով զոհ ձգելու այն երկսեռ հոծ բազմութիւնը, որ փութացած էր՝ հինգշաբթի երեկոյ՝ ներկայ գտնուիլ ի նպաստ Ազգ. Երկսեռ վարժարաններու տրուած ներկայացման։

28 մայիս 1904 ԿՆԻՔ

Շումլայ

«ԿՐԱԿՈՏ ՋՈՒՐԸ»

(Միխիլի կեան, ից)

(Թարգ. ռուսերէնից)

Զ

Խրախճանքից յետոյ Մօկսունը, իր սովորութեան համաձայն սահնակ նստեց գնաց։ Ճանապարհին նա այնպիսի մի գեղեցիկ ինքնամոռացութեան մէջ ընկաւ, որ պառկեց սահնակի վրա, եւ եղջերուներին ազատ ձգեց իրենց ուզած տեղը գնալ։ Երբ եղջերուները հասան այն տեղ, ուր նոր խրախճանք էր սպասում, Մօկսունը մեռած էր։ Նա ճանապարհին կրակոտ ջրից այրվել էր։

Բոլոր նրա հետ արբողները գտան որ Մօկսունը շատ վայելուչ մահով էր մեռել, ինչպէս քաջ զինւորը իր պարտականութիւնը կատարելիս։ Մահւանից առաջ Մօկսունը վայելել էր այն, ինչ որ կեանքի մէջ իրեն համար ամենաթանկագին էր։ Եւ որչա՞փ մարդիկ մեռնում են իրենց համար թանկագին եղածից հեռու!

Մօկսունը մնաւ այն հաճելի երազների մէջ, որոնցով կրակոտ ջուրը լցնում է մարդկանց հոգին։

—Աստուած ամենքին էլ այդ տեսակ վերջ տայ, ասում էին նրանք. մեզ Մօկսունի պատաւին, բայց նա էլ կը հանգստանայ, երբ իմանայ թէ Մօկսունը մահից առաջ չէր տանջվում այլ ուրախանում էր։

Մօկսունի օղլի ընկերնելը գլուխները թափահարեցին եւ նրա համար վայելուչ կերպով թաղում սարքեցին։

Բոլոր շրջակայ կայարանների այր մարդիկը հաւաքվեցին ծեր Մօկսունին վերջին յարգանքը մատուցանելու։ Մարմինը մաքուր եւ եղջերուի նոր մորթով չինված պատանի մէջ փաթթելով, փոկերով ամրացրին սահնակին ու տարան գերեզմանատուն. նրա հետ դրին նետը եւ աղեղը, որոնցով նա չնիկներ էր սպանում, նոյնպէս եւ ոտքերի սահոցները, որոնցով նա ընկնում էր վայրենի եղջերուների ետեւից. ծխախոտի քիսէն, ծխախոտ եւ ծխամորճը, մի կտոր եղջերուի միս, չորցրած ձուկ, ամեն ինչ որ պէտք է հեռաւոր ճանապարհորդութեան համար։

Դրին եւ նրանից, ինչ որ նա աշխարհի երեսին ամեն բանից շատ էր սիրում. Ինչպէս թանկագին բարեկամին առանց նեցուկի թողնե՞լ, ինչպէս կրակոտ ջրի պաշար չը տա՞լ

Ինչպէս որ պէտք էր հանգուցեալին կարգաւորեցին հեռու ճամբորդութեան համար. սահնակում լծեցին նրա սիրելի եղջերուներին եւ տարան բարձր բլրի վրա երկնքից մօտիկ, այնտեղ ուր ամառը արեւն է փայլում, ուր ձմեռը աստղերը պայծառ են պլպլում։

Բոլոր բարեկամները դիակի ետեւից էին գնում, իսկ շամանը սահնակի առջեւից։ Սա ճանապարհին ծնծղայով կամացուկ զնկզնկացնում էր. կարծես թէ ամենի ուշադրութիւն գրաւել ուզելով իր ասելիքների վրա։

Հազիւ թափորը բարձրացել էր բլուրի վրա, երբ երկու սամօեդներ վրա վազեցին ու կտրեցին հանգուցեալին տանող եղջերուների կոկորդները. յոգնած, տանջված, լեզուները դուրս ընկած եղջերուները, դեռ վազելիս տեղափոխվեցին ստուերների թագաւորութեան մէջ. ուր պէտք է տանէին եւ իրենց տիրոջը։ Նրանք ծնկաչոք միացին. կարծես թէ պատրաստվելով վեր կենալ եւ թռչել ստուերների թագաւորութիւն, երբ արդէն հեռացած կը լինէին կենդանի մարդիկը, հանգուցեալին մենակ թողելով ամպերի եւ աստղերի միջեւ....

Շամանը երկար նայեց ամպերին, աշխատելով նրանցից գուշակել թէ՝ հանգուցեալին ինչ է սպասում ստուերների թագաւորութեան մէջ. սամօեդները նախապաշարեալ սարսափով դիտում էին շամանի բարձր հասակը, որ զարդարված էր փոկէ փնջերով, պղնձէ եւ երկաթէ օղակներով, հրաշալի ձկների, թռչունների եւ գազանի պատկերներով։ «Այս պեւոր ծերունը տիրապետում է հիւանդութիւններին, թափանցում է մահւան գաղտնիքների մէջ. արբենում է առանց կրակոտ ջրի եւ ոգիների հետ զրուցում է ինչպէս հասարակ մարդկանց հետ։

Ի՞նչ կանի. եւ ի՞նչ պէտք է ասէ հիմա», մտածում էր Բօյագիրը։

Շամանը ծնծղաները բարձրացրեց, նրանց դէմ արաւ քամուն, եւ ամպերը սկսեցին սահել երկնքովը։ Առաջ նրանք փակված էին, իսկ հիմա շարժվեցին։ Շամանը կրկին ծնծղահարեց, ու ամբողջ բլուրը որոտաց չարժուն հօտերի աղմուկով։

«Ո՞րտեղից եկան հօտերը, մտածեց Բօյագիրը. այդ՝ ոգիները ծեր Մօկսունի համար հօտեր են քշում բերում։ Շատ բան կարող է անել փորձված շամանը։ Նա կարող է միւս աշխարհում հանգուցեալի համար լաւ կալուածք խնդրել»։

Բօյագիրը երազելով նայում էր «այն աշխարհին», երկինք եւ միայն ամպեր ու անտակ կապուտութիւն էր տեսնում։ Նա այնքան խորունկ է բայց ամայի... Նրան հաճելի չէր գաղթել այնտեղ, բարեկամ Մօկսունի մօտ։ «Չէ, պէտք չէ»։

Շամանը վերջացրեց թաղման երգը եւ դառնալով Բօյագիրին ասաց.

—Իսկ հիմա, երբ տէրտէրին տեսնես, ասա որ ծերունին մեռաւ. նա պէտք է այդ իմանայ, հոգիների եւ նուէրների հաշւի համար։

Ամենքն էլ հեծան եղջերուների վրա եւ արագութեամբ հեռացան հանգուցեալին թողելով բլրի վրա։

Ընդարձակ տունդրայում շատ հեռուից երեւում է բլուրը, եւ ամենքին յիշեցնում հաշակաւոր արդիւնաբերող Մօկսունին, որ մեռաւ կրակոտ ջրից։

(Շարունակելի)

ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

Հայրենիքի գաղափարը. — Մ. Վարանդանի հրատարակութիւն Հ. Ց. Դաշնակցութեան ի Ժնէվ։ Գին 1 ֆր.

Վառնայի մէջ կարելի է գնել Բարկէն-Սիւնի ընթերցարանէն։

Հայրենասէր Իտալացին. — Մաքս Նորտաու, թարգմ. Լ. Բաբայեանի, տպագրուած Թէհրան։ Գին 7 կոպէկ։

Երկերի ժողովածու. — Ատրպետի, տպագրուած Թավրէզ, գինը 1 ռուբլի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Անգլիական արտաքին գործերի մինիստրութիւնը՝ հայկական մի հիմնարկութեան կողմից Սասունի գէպքերի առիթով իրեն ուղղուած հեռագրին՝ պատասխաններ է հետեւեալ գրութեամբ.

Արտաքին գործերի
Նախարարութիւն
Լօնտոն Մայիս 30, 904

Պարոն,

Ինձ հրահանգուած է մարկիզ Լանսդուունի կողմից՝ տեղեկացնել ամսիս 21 ղրկած ձեր հեռագրի ստացման մասին։ Ի պատասխան ձեր դիմումին՝ նորին Մեծութեան կառավարութեան մի ջամտութեան վերաբերմամբ Հայաստանում՝ ես հրահանգ ունիմ ասել, որ նորին Մեծութեան դեսպանը Կ. Պոլսում և նորին Մեծութեան հիւպատոսները Հայաստանի մէջ անում են բոլորը, ինչ որ կարող են թիւրք զօրքերի կողմից լինելիք ծայրահեղութիւնների առաջն առնելու համար։

Մնում եմ պարոն ձեր
ամենահնազանդ խոնարհ ծառայ
Տ. Բ. Սանդերոն

(Դրօշակ, Ապրիլ–Մայիս)

— Երեկ հոս հասած «Թանի» մէջ կը կարդանք թէ՝ Ֆրանսայի արտաքին գործոց նախարարը հրահանգած է Պոլսոյ դեսպան Պ. Քոնսթանի որ միանալով իր անգլիացի և ռուս պաշտօնակիցներուն հետ խստիւ պահանջէ թուրք կառավարութենէն վերջ դնելու հայերու հանդէպ եղած խստութիւններուն։

— Եւրոպական թերթերուն Պոլսէն կը հաղորդեն թէ էրզրումի մօտ թուրք զօրքը ընդհարում ունեցեր է 7 հոգիէ բաղկացած հայ հրոսախմբի մը հետ, և իբր թէ ոչնչացուցեր է զայն։

———

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱԶԴ

Հ. Ց. Դ.

Գ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՑ

Հ. Ց. Դ. Ընդհ. Ժողովը. նկատելով անցեալ բանակցութիւնները ու անյաջող փորձերը, այն դատապարտելի ոգին, որ արմատացած է հնչակեան երկու հատուածներու մէջ թէ՝ յեղափոխական ընդհանուր տեսակէտով և թէ՝ մասնաւորապէս «Հայ Յեղափոխական Դաշնակցութեան» նկատմամբ, և այն ներքին պայքարները, որոնք ի վերոյ եղբայրասպանութիւններու յանգեցան, արատաւորելով հայ յեղափոխութեան և հայ ժողովուրդի պատիւը, մերժեց ոեւէ քայլ ընել միութիւն կամ համերաշխութիւն կնքելու համար անոնց հետ։

Այս որոշումը սակայն չ'արգիլեր, մանաւանդ երկրի մէջ, դաշնակցական ընկերներուն՝ վերոյիշեալ և այլ մարմիններուն պատկանող, գործին նիրուած և վստահելի անհատներու և խմբերու հետ համերաշխօրէն կռիւ մղել ընդհանուր թշնամիին դէմ։

(Քաղուած Ընդհանուր Ժողովի արձանագրութիւնից)

———

ԴԻՄՈՒՄՆԵՐ

Արձագանք տալով Սասունից եկած ծանր լուրերին, «Դրօշակ»ի խմբագրութիւնը ուղղեց Ֆրանսական, անգլիական, իտալական և աւստրիական արտաքին գործերի մինիստրութիւններին մի մանրամասն տեղեկագիր-հեռագիր, խնդրելով անմիջական միջամտութիւն՝ սանձահարելու օսմանեան կառավարութեան վայրագ գործողութիւնները, որոնք կասկած չկայ, թելադրուած են Կ. Պոլսից, սուլթանի պալատից։ Մենք չենք խնդրում խնայել յեղափոխականներին, այլ պահանջում ենք անմասն ժողովրդից չառնել յեղափոխական տարրի վրէժը։

Միաժամանակ «Դաշնակցութեան» անունից Արեւմտեան Բիւրոն դիմումներ արեց Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ազդեցիկ քաղաքական գործիչներին, ինչպէս և ազդեցիկ լրագիրների խմբագրութիւններին՝ խնդրելով յուզել հայկական հարցը մամուլի և պարլամենտների մէջ։

———

Պարիզից, Ֆրանսացի մեր բարեկամները, որոնք լաւ ծանօթ են կառավարական արամադրութիւններին, մեզ տեղեկացնում են, որ ֆրանսական արտաքին գործերի մինիստրը գործնական քայլեր է անում Սասունի և Տարօնի հայերին հովանաւորելու համար։ Այդ նպատակով պ. Դելկասէ բանակցութիւն մէջ է արդէն անգլիական և ռուսաց արտաքին գործերի մինիստրների հետ, և իբր արդիւնք այդ բանակցութեան՝ կարգադրուած է, որ երեք պետութիւնների հիւպատոսները շտապեն դէպի Մուշ՝ հարկաւոր միջոցները ձեռք առնելու համար։ Տարօնից մեր ընկերները հաղորդում են, որ «երբ լուր տարածուեց, թէ եւրոպական հիւպատոսները գալիս են, ժողովուրդը սրտապնդուեց, իսկ թիւրք պաշտօնեաները սկսեցին աւելի զգոյշ և չափաւոր լինել»։

———

«ԴՐՕՇԱԿ»Ի ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Դրօշակի վերաբերմամբ Ընդհանուր Ժողովը կարգադրել է՝

1) «Դրօշակը» ձրի տարածել միմիայն թիւրքաց Հայաստանում և թիւրքիայում։

2) Այդ սահմաններից դուրս վերացնել մինչեւ այժմ գոյութիւն ունեցող անվճար ձեւը և նշանակել բաժանորդագրութիւն հետեւեալ կերպով՝ Ռուսաստան և Կովկաս՝ 2 ռուբլի։ Պարսկաստան՝ 1 թուման։ Ամերիկա՝ կէս դոլար։ Եւրոպա և մնացած երկիրներում՝ 3 ֆրանք տարեկան։

3) Այն տեղերում, ուր գոյութիւն ունեն «Դաշնակցութեան» կոմիտէներ, «Դրօշակ»ը տարածուում է վերջինների միջոցով, որոնք և պարտաւոր են գանձել տարեկան վճարը և ամբողջութեամբ, համաձայն տարածուող համարների քանակի, հասցնել Արեւմտեան Բիւրոյին։

4) Կոմիտէ չեղած տեղերում մասնաւոր անձինք, «Դրօշակ»ը ստանալու համար՝ պէտք է դիմեն խմբագրութեան՝ կանխիկ ուղարկելով տարեկան վճարը։

Դրօշակի վերաբերեալ այս որոշումները գործադրութեան մէջ են դրուել ապրիլի համարից սկսած։

Դրօշակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Մակեդոնիայի մէջ փոքրիկ խռովութիւններ տեղի կունենան, տեղ մը՝ ալ փորձ եղած է ուժանակով՝ և թրէնը օդը հանած է։ Քանի մը տեղեր ալ փոքրիկ հրոսախմբեր ելեւցած են։

— Թուրք կառավարութիւնը ըստ եւրոպական թերթերու, համաձայնած է որ ռուսական նաւատորմիղը Տարտանելէն անցնի։

— Քուրտերը ամբողջ Հայաստանի մէջ չափազանց գրգռուած են հայերուն դէմ։ Մուշի իշխանութեանց հեղինակութիւնը բոլորովին ինկած է քուրտերուն քով։

ՌՈՒՍ—ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Վերջին օրերս պատերազմի դաշտէն որոշ լուրեր չեն գար, միայն որոշ է թէ ճապոնացիները հէնզհետէ զօրք կը տնպացնեն և ռուսական զօրաբանակները նեղդրութեան մէջ կը ձգեն։ Բօրթ-Արթուրի վրայ քանի մը անգամ յարձակումներ տեղի ունեցեր են, քաղաքը շատ վնասուած է, ինչպէս և ամրութիւնները։ Ամէնօր և բոպէ Բօրթ-Արթուրի գրաման լուրը կրսպասուի, որովհետեւ Քուրոքաթքինի օգնութեան ղրկուած զօրավար Շտակելպերկ չէ կրցած իր ծրագիրը գործադրել Բօրթ-Արթուրին օգնելու համար։

— 31 մայիսին Բեթերսպուրկէն Բարիզ կը հեռագրեն թէ՝ պատերազմի դաշտէն լուրերու բացակայութեան պատճառով, մեծ դժգոհութիւն կը տիրէ հոն։

Կը խօսուի թէ ժէնէրալ Քուրոքաթքին ոչինչ պիտի կարենայ ընել, մինչեւ որ անոր զօրքերուն թիւը 400 հազարի չը հասնի։

— 30 մայիսին Բարիզ կը հաղորդեն թէ՝ Վլատիվոսթոքինյարաբերութիւնները խզուած են, քաղաքին մէջ պաշարի պակասութիւն կայ։ Գիշերները քաղաքին մէջ մթութիւնը կը թագաւորէ, որովհետեւ գազի պակասութիւն կայ։

Ճապոնացիները կը շարունակեն յառաջ խաղալ։

— Բեթերսպուրկէն 31 մայիս կը հաղորդեն թէ Ցարը յանձնախումբ մը կազմեր է որ ուսումնասիրութիւններ ընէ Ռուսիոյ մէջ կանոնաւոր պատասխանատուութեան տակ վարչութիւն մը հիմնելու։ Այս ի հարկէ պատերազմէն վերջը պիտի տեղի ունենայ։

Մայիս 28ին Թոքիոյէն Լօնտոն կը հեռագրեն թէ՝ զինուորական գլխաւոր վարչութիւնը համոզուած է թէ Փորթ-Արթուրը գրաւելու համար չորս շաբաթ պէտք է։ 100 հազար ճապոնացի զինուորներ կը գտնուին Լեաոթունք թերակղզին։

— Մայիս 28ին Լօնտոնէն կը հաղորդեն որ Կոր. Էսթեր թելեկ ընկերութեան ծովային հեռագրական գիծը, որ Քորէանկը կապէ Ճապոնի հետ, կը գտնուի ճապոնական զօրաց հրամանատարի իշխանութեան տակ, հոն կատարուած ամեն բան գաղտնի կը պահուի։

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

«Վիպաթերթ»ի հրատարակիչ Տ. Օննիկ Բարսեղեան ճամբորդութեան մէջ գտնուելով, Ցունիսի թիւը փոխանակ ամսոյն 1ին, ամսոյն 15ին պիտի հրատարակուի։

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна